

**ՏԻԳՐԱՆ ԶՈՒԽԱԾԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԿԵԱՆՔԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ
«ԲԱԶՄԱՎԷՊ»Ի ԷԶԵՐՈՒՄ**

Հայկական պարբերական մամուլում հայ երաժշտութեան դասական, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, հանճարեղ նուագահիւս (կոմպոզիտոր), շնորհաշատ դաշնակահար, տաղանդաւոր խմբավար, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն երաժշտական-հասարակական գործիչ Տիգրան Զուխանեանի (1837-1898) կեանքին ու գործունէութեանը նուիրուած առաջին հրապարակումներն ի յայտ են եկել դեռեւս 1870ական թուականներին՝ Երուսաղէմում հրատարակուող «Սիոն»ի 1871 9-րդ համարի «Բանասիրական» բաժնում (էջ 196-198) տպագրուել է Ա. Այվազեանի «Արշակ Բ.» նուագերգութիւնը-երաժշտութիւն Զուխանեանի յօդուածը:

Այնուհետեւ, նուագահիւսի կեանքի օրօք, նրա մասին յօդուածներ են տպագրուել Թիֆլիսի «Մեղու Հայաստանի», «Արձագանք», «Մշակ», «Նոր դար», «Տարագ», Կ. Պոլսի «Արեւելք», «Հայրենիք», «Մասիս», Զմիւռնիայի «Արեւելեան մամուլ» եւ Վիեննայի «Հանդէս ամսօրեայ» պարբերականներում:

Տ. Զուխանեանի կեանքին ու ստեղծագործութեանն անդրադարձած հայկական պարբերականների ցանկում, ինչպէս տեսնում ենք, զարմանալիօրէն բացակայում է «Բազմավէպ»ը: Եւ դա այն դէպքում, որ Զուխանեանը կաթողիկէ հայ էր: Դրա մասին է իր յուշերում վկայում հայ ականաւոր լեզուաբան եւ բառարանագիր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հրաչեայ Աճառեանը. «... Այս երգին եղանակ յարմարեցրեց նշանաւոր երաժշտագէտ Տիգրան Զուխանեանը, որ ամբողջ Կոստանդնուպոլիսը լցրել էր իր «Լեպլեպիմի Հորիոր» օպերայի աղմուկով: Դպրոցի ամֆիթատրոնում ամբողջ աշակերտներս հաւաքուեցինք եւ Զուխանեանը մեզ խմբերի վերածելով, սովորեցրեց բառաձայն երգը: Ես սուրբաբանների մէջ էի. մինչեւ

այժմ յիշում եմ Ձուխաջեանին, որ հայ կաթոլիկ լինելով *բ*-ի տեղ *դ* էր արտասանում եւ երեւ խմբերին դիմելով կոչում էր՝ «Պատղա՛ստ, պատղա՛ստ, պատղա՛ստ»¹:

Եւ այսպէս՝ 1898 թուական, 10ը Մարտի: Զմիւռնիայում, ծանր տառապանքներից յետոյ, դէմքի քաղցկեղից 61 տարեկանում կեանքից հեռանում է Տիգրան Ձուխաճեանը:

Նուագահիւսի անժամանակ մահուանն արձագանքում են թիֆլիսեան «Տարագ», «Մշակ», «Նոր դար», Զմիւռնիայի «Արեւելեան մամուլ»...

Տ. Ձուխաճեանի մահուան գոյժին արձագանքում է նաեւ «Բազմավէպ»ը. 1899ի փետրուարեան համարի «Նշանաւոր հանգուցեալք» բաժնում տպագրւում է «Բազմավէպ»ի խմբագիր՝ բնագէտ, գրող, բանասէր Հ. Սիմոն Երեմեանի² «Հայ վերտիկն» վերտառութեամբ «նշանակալի»³ յօդուածը եւ նուագահիւսի լուսանկարը:

Խորհրդանշական էր վերնագրի ընտրութիւնը: Յայտնի է, որ դեռեւս իր կեանքի օրոք Տ. Ձուխաճեանին իտալացիները հա-

1 ԱՃԱՌԵԱՆ, Հ., *Կեանքիս յուշերից*, Երևան 1967, էջ 83:

2 Հ. Ս. Երեմեանն ուսանել է ծննդավայրում, ապա Վենետիկի Միսիթարեանների մօտ, 1895-ին դարձել միաբանութեան անդամ: 1899-1905թթ. Խմբագրել է «Բազմավէպ»ը, 1901-ից՝ նաեւ «Գեղունի» հանդէսը: 1896-ին վենետիկում նա հրատարակել է «Նոր կենդանաբանութիւն եւ մարդաբանութիւն պատմական եւ նկարագրական», 1898-ին՝ «Տարուիականութիւն կամ տեսակաց եւ մարդու ծագման խնդիրը», 1901-ին՝ «Հայ բժշկարանք» աշխատութիւնները, ինչպէս նաեւ «Պատկերագրող քաղցիր՝ գործնական գիտութեանց» (1900) աշխատութիւն-հանրագիտարանը: Հեղինակել է գեղարուեստական ստեղծագործութիւններ՝ «Տուրկին» (1903), «Տագնապը» (1904) վիպակները, «Անէծք» (1903), «Սաքենիկ» (1904), «Ռիստը» (1905) ողբերգութիւնները, արձակ բանաստեղծութիւններ, յուշեր, ինչպէս նաեւ գրականագիտական ուսումնասիրութիւններ՝ «Կենսագրութիւն Ղեւոնդ Ալիշանի» (1902), «Գրական պատմութիւն եւ գեղեցիկը» (1915), «Գրագէտ հայեր» 10 հատորանոց աշխատութիւնը (1913-1933), որտեղ տրուած են հայ մշակութային գործիչների Ղեւոնդ Ալիշանի, Ղազարոս Աղայեանի, Մառքէոս Մամուրեանի, Յակոբ Պարոնեանի, Տիգրան Կամսարականի եւ այլոց դիմանկար-քնութագրականները: Տե՛ս ՇՏԻԿԵԱՆ, Ս., *Երեմեան Սիմոն*, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 3, Երևան, 1977, 546:

3 ԹԱՀՄԻՋԵԱՆ, Ն., «Բազմավէպը եւ հայ երաժշտութեան հարցերը (ըստ մեր գիտական երկարամեայ փորձառութեան)», Քազմավէպ, ՃՄԴ-(1996), թիւ 1-4, էջ 177:

մեմատել են Վերդիի հետ՝ անուանելով նրան «Հայ Վերդի»⁴։ Յայտնի է նաեւ, որ մահուան մահճում նուազահիւսն իր սնարի մօտ հերթապահող Սմբատ Քէսէճեանից խնդրել էր Ջ. Վերդիի «Օթւլլոյ» երաժշտական խաղի խաղատեսուրը, գրկել այն, սեղմել կրծքին ու հրաժեշտ տուել երկրային կեանքին։

«Մինչդեռ բնութեան փաղցրաբոյր եւ փաղցրամուգ նոր սերունդը կը պատրաստուէր՝ ձմրան տխուր վարագոյրը պատառելով՝ գալ գարդարել գարնան զուարթութիւնը, եւ երբ բնութեան նորածին ու երիտասարդ երաժիշտ լանջերնին ուռած դայլայիկնին կը հնչեցնէին, - գրում է *մահախօսականի հեղինակը*, - Չուհանեանի թշուառ հոգին կը յուզուէր, կը հիւծէր Զմիւռնիոյ մթնոլորտին տակ, տխուր մահին մէջ. այն հոգին՝ որ կը յուսար իւր թրթռուն ձայնով ու մատուրներով՝ հետեւի բնութեան երաժշտաց սրբնի ճուրջուկներուն. այն հոգին, որ 55 տարիներէ ի վեր Պոլսոյ սալոններուն եւ թատերաբեմերու մէջ իբր Հայ Վերտի կը ծափահարուէր. այն հոգին՝ որուն վառվռուն երեսակայութեան գեղեցիկ արտադրութիւններն ի Փարիզ, յեփպոստ եւ յԱթէնս համակրելի ընդունելութիւն գտած էին։ Չուհանեան կը պատրաստուէր վերահաս ամրան հետ տեսնել նաեւ իր կործանուած առողջութեան ամառն ալ, բայց անաչառ փաղցկեղը կը ճնշէր նորա մարմինը, եւ նուագելի հոգին թւ առնելով՝ կը սաւառներ»⁵։

Այնուհետեւ Մխիթարեան հայրը նկատում է, որ այդ կորուստը մեծ է, քանի որ Չուխանեանը «ինքն էր մի միայն եւ մեծ Հայ երգահանն»⁶։

Ապա հեղինակը մէջբերում է կատարում նուազահիւսի մահուան կապակցութեամբ «Արեւելեան մամուլում» տպագրուած մահախօսականից, որտեղ, մասնաւորապէս, ասուում էր. «Սիրեցիմք մեմք զինքը, մելամաղձութեան այդ տխրանոյշ գաւակը, զի մե՛րն էր ան, մեր հոգիին ազնուագոյն մասը։ Իր արցունքով լացիմք, իր ցաւերով տխրեցանք, իր անուշոյզ երագեցիմք ու իր շնչով ոգիացանք։ Այդ կեանքը որ մեր ամենուս կեանքն եղաւ, հրեղէն ասուպի նման սահելով աշխարհի հորիզոնէն, իր ետեւ կը թողու անհուն պարապ մը։ Արեւելեան երաժշտութիւնը՝ Չուհանեանի հետ գերեզման կը մտնէ»⁷։

Յօդուածի երկրորդ մասում Հայր Երեմեանը թուարկում է Չուխանեանի ստեղծագործութիւնները եւ իրաւացիօրէն նկատում,

4 ՊետիկոՒԱՇԼԵԱՆ, Ն., *Թատերական դէմքեր*, Ամբիլիաս 1969, էջ 111։

5 ԵՐԵՄԵԱՆ, Հ. Ս., *Հայ վերտի*, «Բազմավեպ», ԾԷ(1899), թիւ 2, էջ 81։

6 Անդ։

7 Անդ։

որ «Զուհաճեանն էր՝ թրփական երաժշտութեան զարկ տուողն եւ յառաջ մղողն»⁸:

Իր 2 էջանոց հակիրճ մահախօսականը Հ. Երեմեանն աւարտում է հետեւեալ ուշադրաւ եզրակացութեամբ՝ «Զուհաճեան մեծ սխալ մը գործեց իւր կենաց մէջ, այն է չնետելն իմք զինքն Ռուսահայ թատերգակ բեմին վրայ, ուր միայն կրնար երջանիկ կեանք եւ դեռ աւելի փայլուն ասպարէզ մը վայելել»⁹:

«Բազմավէպ»ի յաջորդ անդրադարձը Տ. Զուխաճեանին տեղի ունեցաւ ճիշտ տասը տարի անց՝ 1909 թուականի Մարտի համարի 136-137 էջերում: Յօդուածի վերնագիրը նոյնն էր՝ դարձեալ «Հայ Վերտին (Տիգրան Զուհաճեան)», իսկ հեղինակն էլ կրկին «Բազմավէպ»ի խմբագիրն էր, այս անգամ Հայր Ներսէս Տիրացույեանը:

Զարմանալի պատահականութիւն կամ խիստ տրամաբանական զուգահեռութիւն պէտք է համարել այն փաստը, որ «Բազմավէպ»ի հէնց նոյն համարի էջ 143-ում Հայր Ներսէս Տիրացույեանի հեղինակութեամբ տպագրուում է Տ. Զուխաճեանի հեղինակած հայոց առաջին օպերայի՝ «Արշակ Բ.»ի թատերատեսրի հեղինակ՝ թատերական գործիչ, թատերգակ, բանաստեղծ, թարգմանիչ, գեղագէտ, ուսուցիչ ու գրական քննադատ Թովմաս Թէրգեանի (1840-1909) մահախօսականը՝ «Հանգիստ Թովմաս Թէրգեանի» վերնագրով¹⁰:

1909ի սկզբներին Թէրգեանը կաթուածահար էր եղել. անդամալուծ էր դարձել մարմնի ձախ կողմը. նա այլեւս դատապարտուել էր ցմահ փակուած մնալ տանը: Մինչ այդ՝ անողորմ մահը 1903ին խել էր Թէրգեանի կրտսեր որդուն՝ տասնվեցամեայ Արմանին, անհուն վիշտ պատճառելով սգակիր ծնողներին: Թէրգեանի հիւանդութեանը նախորդել էր աչքերից մէկի կուրութիւնը, որոշ ժամանակ կորցրել էր խօսելու կարողութիւնը, բայց փորձառու բժիշկները բարեկաւել էին վիճակը: «Զեր կըրնար, յիշում է բանաստեղծի որդին՝ Եղուարդ Թէրգեանը, - ոչ գրել, ոչ կարդալ. օրիորդ մը կու գար ամէն օր իրեն ընթերցումներ ընել ու մամաւանդ իր բանաստեղծութիւններն օրինակել ձեռա-

8 Անդ:

9 Անդ, 82:

10 ՏԻՐԱՑՈՒՅԵԱՆ, Հ. Ն., Հանգիստ Թովմաս Թէրգեանի, «Բազմավէպ», Կէ (1909), Թիւ 3, էջ 143:

գիրներու վրայէն եւ իրեն կարդալ՝ որպէս զի բերանացի իր դիտողութիւններն ու սրբագրութիւններն ընէր»¹¹:

Անկողնուն դամուած՝ բանաստեղծը կարգի է բերում տըպուած ու անտիպ քերթուածները, յօրինում նորերը՝ փափագելով հրատարակել բանաստեղծութիւնների ժողովածուն, բայց ապարդիւն: Սեփական տկարութեանը գումարւում է կնոջ՝ Սաթենիկի ծանր ու ցաւատանջ հիւանդութիւնը: Հիւանդ տիկնոջ տառապանքներն աւելի էին բզկտում Թէրզեանի հոգին: Նման պայմաններում 1909ի Փետրուարի Տին վախճանում է բանաստեղծը. երեք ամիս անց ամուսնուն ու վաղամեռիկ զաւակին է միանում տիկին Թէրզեանը: «Պոլսոյ հայ հասարակութիւնը, իր բոլոր հատուածներով միացած, խորին յարգանքի ցոյցերով պաշարեց վարպետին դագաղը: Յուդարկաւորութեամբ արարողութիւնը տեղի ունեցաւ Փերայի Ս. Յովհան Ոսկերեքան եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Սերաստիոյ առաջնորդ Տ. Լեւոն Քէչեմեան եպիսկոպոսի, ներկայութեամբ Պոլսոյ հայ հասարակութեան ընտրանիին. դասին մէջ կեցած էին իբր սգակիր՝ երկու Հայ վարդապետներ զոր Հայոց Պատրիարքարանի կողմէ դրկած էր Իգմիրլեան սրբազանը, եւ Մխիթարեան Միաբանութեան կողմէ՝ Հ. Յուսիկ Մեհրապեան, Հ. Շալայի Տայեցի եւ Հ. Սահակ Տէր-Մովսէսեան: Այս վերջինն արտասանեց դամբանականը: Յետոյ, տարին զինքն հանգչեցնել Շիշլիի գերեզմանատունը, Պէշկէ-թաշլեանի, Հէփմեանի, Ադամեանի մօտիկ...»¹²:

«Հայ Վերտին (Տիգրան Զուհաբեան)» հրապարակման մէջ Հայր Ներսէս Հայերէն թարգմանութեամբ ներկայացնում է Պոլոնիայի թերթերից մէկի 1909ի Փետրուարի 21ի համարում հրապարակուած՝ Բատուայի համալսարանի ուսանող, հայասէր իտալացի կոմս Riccardo della Torre-ի «Il Verdi Armeno» յօդուածը, որի նպատակի մասին հեղինակը գրում է. «Սակաւաթիւ եմ այն իտալացիք որ բանջցած ըլլան սոյն հանճարը, եւ մեծ գայն մեր ազգիս հո՛ս մի քանի խօսքով բանջցնելուս միջոց կը զգամք որ անօգուտ պիտի չդատուի մեր ճիգը, քանի որ Մեծ Արիւստագէտի յիշատակն է որ կ'ուզենք պատուել»¹³:

«Հայաստան արեւելի այն երկիրն է,- շարունակում է երիտասարդ կոմսը,- որ իր խանձարուքի մէջն իսկ ծաղկեալ պահեց

11 ԹԵՐԶԵԱՆ, Թ., *Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ*, հ. Ա, Սուրբ Ղազար, Վննետիկ 1929, էջ ԻԹ:

12 Անդ, էջ ԻԹ-Լ:

13 ՏԻՐԱՑՈՒՅԵԱՆ, Հ.Ն, *Հայ Վերտին*, մշ. աշխ., աշխ., էջ 136:

հայրենաւանդ փաղափակրթութեան ամբողջութիւնը՝ անասան մնալով կեանքի ամենադժնդակ պայքարի մէջ՝ որ ցարդ կը մղէ զինքը շրջապատող ամէն տարրերու դէմ, մանաւանդ թէ հայ միտքը մշտատեւ հալածամքներու մէջ քեղմնաւոր եւ կորովի կը հանդիսանայ: Համեարը գիտէ քարճրանալ մարդկային արգելքներէն վեր ու անսանձ նախքէ միջոցին մէջ՝ լուսոյ անսպառելիի ճառագայթներ ցոլացնելով ամէն կողմ: Եւ իրաւամբ պատուարեր հանճարը կը սփռի մեղուած ազգի մը վշտացեալ սիրտը:

Տիգրան Չուհանեան՝ Հայ Վերտին պոյախի հանճարներէն մին եղաւ: Ինքը ներդաշնակ մեղեդիներու երկնային խմբագիրը, վարպետ արհեստագէտը՝ իր յաղթանակներովն պատուեց այժմեան փաղափակրթութիւնը եւ դեռ աւելի իւր Հայրենիքը¹⁴:

Յօդուածի իւրաքանչիւր տողում զգացում է երիտասարդ իտալացու հիացումը Չուխանեանի հանճարով. «Չուհանեան վարպետն իր քնարին թրթռացումներուն ներքեւամբ եւ խորթալուր ներդաշնակութեամբը՝ այնքան դիւքած է իր ունկնդիրները՝ որ ամէն ալ համակրանքի զգացումներ եւ միշտ թարմ յիշատակ կը պահեն իւր մասին: Իսկ անոնք որ երաժշտութեան ազնիւ ու վսեմ արհեստին ճաշակն ունին, երբ լսեն Չուհանեանի կտորները զմայլանքի եւ յարգանքի խոր զգացում մը պիտի տածեն անմահ երգահանի շիրմի առջեւ»¹⁵:

Յօդուածի հեղինակն իրաւացիօրէն նկատում է նաեւ, որ Չուխանեանը «բոլոր անձամբ երգի արհեստին նուիրած էր իր անձը, որ քնական հանճարով մ'ալ օժտուած ըլլալով՝ նոր տեսակ երաժշտութեան հիմնադիրը, վարպետ մեկնիչը ու ղեկավարը հանդիսացաւ: Ինքն արեւելեան ազգերու մեղեդիները ի մի ձուլելով՝ նոր դպրոցի մը ստեղծողը եղաւ, եւ Վոսփորի քանաստեղծական երկնքին տակ երագուած ամէն ներդաշնակութիւնները իր քնարէն լսուեցան»¹⁶:

Յաւարտ յօդուածի՝ հեղինակը խօսում է նուազահիւսի մարդկային նկարագրի որոշ գծերի մասին. «Իր փաղցրահամբոյր քնաւորութեամբ արհեստակիցներուն, իր խումբերուն անդամներուն յարգելի ու սիրելի էր: Բնաւ դրամ դիզելու տենչանքէն չրոնուեցաւ, ճշմարիտ արդիստի կեանք մը անցուց, մսխելե աւելի՝ առատածնոն

14 Անդ:

15 Անդ, 136-137:

16 ԱՍՍՏՐԵԱՆ, Ա., *Էջեր հայ-իտալական երաժշտական առնչութիւնների պատմութիւնից*, «Բազմավեպ», ՃԿԳ(2005), Թիւ 1-4, էջ 46:

եւ ողորմած գտնուելով ստակը կը պակսէր քսակէն: Ծերութեան եւ հիւանդութեան միջոց քաշուելով Իզմիր՝ անմխիթար անցուց վերջին օրերը յետին աստիճանի ֆալորութեան մէջ, եւ եթէ Ս. Քսէնէնան աշակերտը փառաւոր յուղարկաւորութիւն կազմակերպելու ամէն ջանք չքափէր, 1898ի Մեծ Վախճանեալը՝ գոեհիկ մարդու թաղումն պիտի ունենար: Այն Զուհանեանը՝ որ մահուան անկողնէն իսկ երաժշտութիւնը կը ներքողէր՝ եւ ձեռաց մէջ վերջին հեղինակութեան կտորը բռնած՝ արտասուաց հովիտէն նուագներու աշխարհը կ'անցնէր»¹⁷:

Շարունակելով իտալացի կոմսի միտքը, Հայր Ներսէս յաւելում է, որ եթէ Զուխանեանի սան Սմբատ Քէսէնեանը կազմակերպեց իր ուսուցչի փառաւոր յուղարկաւորութիւնը, ապա միւս սանը՝ Զուխակահար, դաշնակահար, երգեհոնահար, նուագահիւս, խմբավար, երաժշտական-հասարակական գործիչ Յարութիւն Գրիգորի Սինանեանը (1872-1939) «իւր անխոնջ ճիգերովն իւր Մեծ Վարպետին հողակոյտին վրայ կիսանդրի մահարձանը բարձրացուց 1907ի Յունուարին: Ու Մանգումէի էֆֆիար լրագրի մէջ (տես 1907, Յունւոր. 20). Մայլետոյց Տ. Զուհանեանի յիշատակին գեղեցիկ ներքողներ հրատարակեց»¹⁸:

Եւ իսկապէս՝ Հայր Ներսէս քաջածանօթ էր Յարութիւն Սինանեանի գործունէութեանը: Նկատենք, որ «Գեղումու» 1904ի տարեկան միացեալ համարի 72-73 էջերում լոյս էր տեսել Հ. Ն. Տիրացույեանի «Յ. Սինանեան երաժիշտ եւ իւր խումբը» վերտառութեամբ յօդուածը¹⁹, որտեղ կարդում ենք. «Գեղումնի ընթերցողներուն կը ներկայացընենք այնպիսի հայ անուան պատուարեր անհատ մը, յանձին Յ. Սինանեան երաժիշտին»²⁰: Հեղինակը շարունակում. «Իսկ մենք՝ ներկայ տարւոյս Բազմավէպի Փետրուար թերթին եւ Յունիսի 336 էջին մէջ՝ իր կենաց եւ գործերու գլխաւոր գիծերը դուրս ցատկեցուցած ըլլալով՝ այժմ կը գոհանանք նկատողութեան առնուլ իր արժանիքը իբր հայ երաժիշտ, իբր հեղինակ զանազան կտորներու եւ մանաւանդ իբր երգիչ Մխիթարեան Քայլերգի եւ այլն»²¹:

«Բազմավէպ»ի 1904 թուականի փետրուարեան համարում տպագրուած «Յարութիւն Սինանեան» ծաւալուն յօդուածում Հայր Ներսէսն անդրադառնում է Տիգրան Զուխանեանին եւս: Այսպէս՝

17 ՏԻՐԱՑՈՒՅԵԱՆ, Հ. Ն., *Հայ վէրտիմ*, Զ. աշխ., էջ 137:

18 Անդ, 136-137:

19 ՏԻՐԱՑՈՒՅԵԱՆ, Հ. Ն., Յ. Սինանեան երաժիշտ եւ իւր խումբը, «Գեղում», 1904, էջ 72-73:

20 Անդ, 72:

21 Անդ:

«Կ'ըսուի թէ համեարները իրարու կը նախանձին եւ գիրար նսեմացընել կը ճգնին: Մենք այս բանս չենք տեսներ ընդ մէջ Ձուհանեանի եւ Սիմանեանի: Ձուհանեան կը գնահատէր ու կը սիրէր համակրելի եւ տաղանդաւոր պատանին: Եւ սա կը յարգէր ու կը մեծարէր հայութեան անգուգական երաժշտապետ եւ երգահան Ձուհանեանը»²², *գլուխը* է հեղինակը եւ բերում դա հաստատող մի շարք դրուագներ:

Յօդուածում հեղինակը կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում այն մասին, որ Տ. Ձուխանեանի մահից յետոյ հէնց Յարութիւն Սինանեանը «Արշակ Բ.» օպերայի Նախերգանքը վերածեց ստեղնաւորի եւ սեփական միջոցներով տպագրեց 700 օրինակ, որի վաճառքից ստացուած հասոյթով էլ 1907ին Իլմիրի գերեզմանատանը Ձուխանեանի շիրմին կանգնեցուեց մեծ վարպետի մահարձանը:

1909 թուականին ընդհատուած է բազմավէպեան չուխանեանապատումը:

Խզուած է տասնամեակների լուսթիւնը 20րդ դարավերջին՝ 1996 թուականին:

Հայ նշանաւոր երաժշտագէտ, արուեստագիտութեան դոկտոր Նիկողոս Թահմիզեանի «Բազմավէպը եւ հայ երաժշտութեան հարցերը (ըստ մեր գիտական երկարամեայ փորձառութեան)» ծաւալուն յօդուածում անդրադարձը Հայր Երեմեանի յայտնի յօդուածին, հեղինակին եւս մէկ հնարաւորութիւն է ընձեռում ներկայացնելու մեծ նուագահիւսի մասին իր գնահատականը: «Յիրաւի, լինելով առաջին արեւելցի կոմպոզիտորը, - գրում է Թահմիզեանը, - որ մասնագիտական քարճրագոյն կրթութիւն է ստացել Միլանում, Ձուխանեանը մեծագոյն յաջողութեամբ նախաձեռնել է Արեւելքի եւ Արեւմուտքի երաժշտարուեստների մերձեցման գործը, եւրոպական դասական ձևերը վերստեղծելով արեւելեան երաժշտութեան ելեւէջային-կշռութային իմբնատիպ կերտուածքի հմուտ ներհիւսմամբ:

Որպէս հայ արուեստագէտ, Ձուխանեանը նոր շրջանի մեր առաջին մեծ կոմպոզիտորն է, ստեղծագործական հարուստ ժառանգութեամբ՝ հայկական կոմպոզիտորական նոր դպրոցի կարկառուն հիմնադիրներից մէկը, բազմաբեղուն գործունէութեամբ՝ հայ իրականութեանց արեւելեան երգ ու նուագի հին, աւատաւորական, ի-

22 ՏԻՐԱՅՈՒՆԵԱՆ, Ն., *Յարութիւն Սինանեան, «Բազմավէպ», ԿԲ(1904),* Թիւ 2, էջ 73:

րենց դարմ ապրած ու ֆարացած ձեւերի ճակատագրականօրէն երկար տուած միահեծան տիրապետութեան շրջանում եւրոպական մըշակոյթը եւ երաժշտահասարակական կեանքի ու երաժշտական կըրթութեան կազմակերպման եւրոպական սկզբունքները ժողովրդակամացնող՝ պոլսահայ մի ամբողջ առաջադէմ երաժշտների մահապետը»²³:

Նկատենք նաեւ, որ զգալի է Ն. Թահմիզեանի ներդրումը չուխաճեանագիտութեան մէջ. այս առումով արժէ յատկապէս յիշատակել 2001 թուականին ԱՄՆում հրատարակուած եւ նուագահիւսին նուիրուած նրա հայերէն եւ անգլերէն մենագրութիւնները, որտեղ նա հանրագումարի է բերել տասնամեակների ընթացքում իր ուսումնասիրութիւնների արդիւնքները:

Ն. Թահմիզեանը շարունակում է. «Դեռեւս սպառիչ կերպով մեկնաբանուած չէ այն իրողութիւնը, որ Զուխանեան ըստ էութեան հասակ առաւ, Risorgimentoի հսկայ մատարայի օրինակով, որպէս գեղագիտական առաջադէմ գաղափարների տէր, ներքին հրայրքով լեցուն, ազատատենչ ու արիասիրտ քաղաքացի-արուեստագէտ»²⁴:

Եւ ահա տասը տարի անց, ԻԱ. դարասկզբին՝ 2006 թուականին, «Բազմավէպն», ասես, փորձում է տալ Ն. Թահմիզեանի հարցադրման պատասխանը:

2006 թուականի միացեալ համարում հրատարակուած «Տիգրան Զուխանեան – Il Verdi Armeno» վերնագրով մեր յօդուածում, տարիների հեռաւորութիւնից առաջին անգամ փորձեցինք «քացայտել այն կռուամները, որոնք հիմքեր տուեցին ժամանակակիցներին եւ Ռիկկարդոյ Թորբենին՝ Զուխանեանին անուանելու հայ վերդի»²⁵: Եւ ներկայացրեցինք Վերդիի եւ Զուխանեանի կեանքի եւ գործունէութեան մի քանի ընդհանրութիւններ: Թէ՛ Վերդին եւ թէ՛ Զուխանեանը չընդունուեցին Միլանի կոնսերուատորիան, չստացան բարձրագոյն երաժշտական կրթութիւն, այլ բաւարարուեցին մասնաւոր պարապմունքներով եւ օպերային Օլիմպոսը նուաճեցին ինքնակրթութեամբ՝ ստեղծագործական հետաքրքրութիւնների կիզակէտում մշտապէս պահպանելով երաժշտական

23 Թ.Ա.ՀՄԻՋԵԱՆ, Ն., *«Բազմավէպ» եւ հայ երաժշտութեան հարցերը (ըստ մեր գիտական երկարամեայ փորձառութեան)*, Քազմավէպ, ՃԾԴ(1996), թիւ 1-4, էջ 177-178:

24 Անդ, 178:

25 ԱՍՍՏՐԵԱՆ, Ա., *Տիգրան Զուխանեան – Il Verdi Armeno*, «Բազմավէպ», ՃԿԴ(2006), թիւ 1-4, էջ 107:

Թատրոնը՝ օպերային արուեստում վերջակէտը դնելով 1893ին՝ Ցոմաճեայ վերդին «Ձալստաֆ»ով, իսկ Տոմաճեայ Չուխաճեանը՝ «Ձև-միրէ»ով: Թէ՛ վերդիի կեանքի օրօք, թէ՛ մահից յետոյ Խալիան չծնեց նրա հանճարի ուժին եւ նշանակութեանը համարժէք նուագահիւս: Չուխաճեանն իր ստեղծագործութեամբ նշանակորուեց հայ երաժշտութեան զարգացման մէջ մի ամբողջ դարաշրջան:

Թէ՛ վերդին եւ թէ՛ Չուխաճեանն օպերային խոշոր թատերգակներ էին: Մենք փորձել ենք բացայայտել Չուխաճեանի օպերային թատերգութեան առանձնայատկութիւնները՝ «Արշակ Բ.» օպերայի օրինակով: Գ. գործողութեան վերջաբան՝ գերեզմանոցի տեսարանում Արշակին ներկայացած Ուրուականների երաժշտական բնութագիրը կերտելիս Չուխաճեանը զարտուողոյ սեկունցիանների յաջորդականութիւնից ստեղծել է խաչ կազմող տոնայնութիւնների շարք՝ $g-as-f-g^{26}$, իսկ վարընթաց սեկունգաներով քրոմատիկ «սողացող» ակորդների շարքը, ուղեկցելով հերոսներից մէկին՝ գուժում է յաջորդ գործողութեան մէջ նրա սպանութիւնը եւ այլն:

Ուսումնասիրութեան ընթացքում բացայայտեցինք, որ Գնէլի անէծքն «Արշակ Բ.» օպերայի Բ. գործողութիւնից, իր թատերգական կարեւոր նշանակութեամբ եւ ամանակաւոր շեշտարկման կառուցուածքով աղերսւում է Մոնտերոնէի անէծքին՝ վերդիի «Ռիգուլետտայ» օպերայից: Հարազատ մնալով Գնէլին բնութագրող տոնայնական ոլորտին՝ Չուխաճեանն անէծքի համար ընտրում է $c\ major$ ՝ նկատի ունենալով ողբերգական կերպարների բացայայտման վերջինիս հնարաւորութիւնները: Ի դէպ, նոյն տոնայնութեան մէջ էր նաեւ Մոնտերոնէի անէծքը: Թէեւ Գնէլը սպանւում է օպերայի Բ. գործողութեան ֆինալում եւ հեռանում օպերայից, սակայն յետագայ իրադարձութիւնների համար շարժիչ ուժը հէնց նրա անէծքն է: Իշխան Գնէլի շունչը զգացւում է ամբողջ ժամանակ. նրա ուրուականը յայտնւում է Գ. գործողութեան վերջաբանում, նրա մահուան վրէժը դառնում է գործողութիւնների յետագայ ծաւալման գորաւոր խթան: Ի տարբերութիւն «Ռիգուլետտայ» օպերայի, ուր Ռիգուլետտոն օպերայի վերջում գիտակցում է, որ իր դժբախտութիւնների պատճառը Մոնտերոնէի անէծքն էր, «Արշակ Բ.»ում դա տրուած է քողարկուած, դրա մասին բացայայտ չի խօսւում:

Յօդուածում մենք կանգ առանք մի հնարքի վրայ, որն օգտագործել է Չուխաճեանն իր «Արշակ Բ.»-ում դեռևս 1868ին, մինչդեռ Վերդիի «Աիդայում» այն ի յայտ է եկել տարիներ անց՝ 1871ին: «Արշակ Բ.»-ում անմեղ հերոսները կեանքին հրաժեշտ են տալիս մաժոր լադում: Գնէլի միակ ինքնուրոյն ծաւալուն համարից յետոյ (Բ. գործողութիւնից c-moll անէծքը) Չուխաճեանը կտրուկ շրջադարձ է կատարում բեմոլաւոր տոնայնութիւններից դէպի դիեզաւոր տոնայնութիւններ. D-dur—H-dur—G-dur տոնայնութիւնների տերցիային համադրումների շնորհիւ ստացւում է մաժոր եռահնչիւն: Գնէլը հեռանում է կեանքից միանգամայն հանգիստ խղճով. սպանուելով անարգ թշնամու ձեռքով, նա անիծում է արքային եւ վստահ է, որ իր անէծքն անպատճառ իրականանալու է:

Օլիմպիայի մահառաջի արիան Դ. գործողութեան մէջ սկսւում է d-moll-ում եւ աւարտւում համանուն D-dur-ում: Մաժորում Ges-dur-ում է տարիներ անց Վերդին գրում Ռադամէսի ու Աիդայի հրաժեշտի զուգերգը. սա այստեղ ունի գաղափարա-իմաստային ենթատեքստ՝ թէեւ Աիդան ու Ռադամէսը դարձան մարդկային դաժանութեան, բռնութեան զոհ, սակայն նրանց սիրոյ ուժը յաղթանակեց մահուան: Նոյն կերպ է մեկնաբանում իր անմեղ հերոսների վախճանը Չուխաճեանը. մահերով լի օպերան հեղինակն աւարտում է G-dur-ում, մեռնում են անմեղ մարդիկ, բայց անխուսափելիօրէն պատժւում է Չարը, կործանւում բռնակալ Արշակը: Փաստօրէն, հերոսների մահուան համար մաժոր լադի ընտրութեան հարցում Չուխաճեանը կանխորոշում է Վերդիին:

Երկու տարի անց՝ «Բագմավէպ»ի 2008ի համարում հրատարակուեց մեր «Տիգրան Չուխաճեանի «Ինդիանա» օպերայի առեղծուածը» յօդուածը, որտեղ Տ. Չուխաճեանի երաժշտական թատրոնի համալիր ուսումնասիրման եւ արժէւորման շրջանակներում հայ երաժշտագիտութեան մէջ առաջին անգամ, արխիւային ձեռագրերի հիման վրայ քննութեան ենք առել հայոց առաջին հայրենասիրական օպերան, որ նուագահիւսի երաժշտական թատրոնում առանձնանում է իր անսովոր ճակատագրով: «Ի տարբերութիւն միւս օպերաների, «Ինդիանան» երբեք թեւ չբարձրացաւ ո՛չ հեղինակի կեանքի օրօք, ո՛չ նրա մահից յետոյ, ո՛չ հեղինակային մտայղացմամբ եւ ո՛չ էլ խմբագրուած ձեւով: Աւելիմ՝ ի տարբերութիւն մախորդների եւ «Ջեմիթի», որոնց գոյութեան փաստը գոմէ յայտնի է, թէեւ երաժշտութիւնն՝ անծանօթ, «Ինդիանան», ասես, ան-

տեսուած ու մերժուած բոլորից՝ յանիրաւի մոռացութեան տրուեց: Մինչդեռ սա Զուխանեանի լաւագոյն ստեղծագործութիւններից է, ներառւած շրջանի կատարեալ գործերից»²⁷:

Ուսումնասիրելով «Ինդիանա» օպերան, փորձել ենք յստակեցնել նրա տեղն ու դերը ինչպէս նուագահիւսի ժառանգութեան, այնպէս էլ հայ երաժշտական թատրոնի պատմութեան մէջ: Ստամբուլահայ նուագահիւս, դաշնակահարուհի, խմբավար ու հասարակական գործիչ Սիրվարդ Գարամանուկեանի ջանքերով պահպանուած եւ Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի՝ Տ. Չուխանեանի դիւանում հանգրուանած «Ինդիանայի» ձեռագրերի ուսումնասիրման հիման վրայ բացայայտել ենք օպերայի թատերգական, երաժշտական-ոճական առանձնայատկութիւնները, գիտական շրջանառութեան մէջ դրել դիւանային վաւերագրեր, առաջ քաշել եւ հիմնաւորել օպերայի ստեղծման տարեթուի վերաբերեալ մեր վարկածը:

Այսպիսով՝ ակնյայտ է, որ Տիգրան Չուխանեանի ստեղծագործական կեանքը լուսաբանող յօդուածներով «Բազմավէպ»ը իր ուրոյն ու կարեւոր նպաստն է բերել երաժշտական չուխանեանագիտութեան զարգացմանը: Մի կողմից՝ պահպանել եւ սերունդներին փոխանցել նուագահիւսի կեանքի եւ գործունէութեան վերաբերեալ կարեւոր տեղեկութիւններ ու փաստեր, միւս կողմից՝ նրա օպերային երաժշտութեան վերաբերեալ տեսական վերլուծութիւններ:

Վստահ ենք, որ Տ. Չուխանեանի մահից յետոյ «Բազմավէպ»ում սկիզբ առած չուխանեանապատումն առաջիկայում եւս կը շարունակի իր ընթացքը՝ ի շահ չուխանեանագիտութեան առաջընթացի, ի նպաստ հայ մեծ Մանսուրոյի ստեղծագործութեան հանրահռչակման:

ԱՆՆԱ ԱՍՍՏՐԵԱՆ

27 ԱՍՍՏՐԵԱՆ, Ա., Տիգրան Զուխանեանի «Ինդիանա» օպերայի առեղծուածը, «Բազմավէպ», ՃԿՁ (2008), էջ 31:

Summary

THE ARTICLES COVERING DIKRAN TCHOUHADJIAN'S CREATIVE LIFE ON THE PAGES OF “BAZMAVEP”

ANNA ASATRYAN

In Armenian periodical press the first publications about the outstanding Armenian composer, the founder of Armenian musical theatre, pianist, conductor, pedagogue and music-public figure Dikran Tchouhadjian (1837-1898) appeared during the composer's life – in the 1870s. But curiously “Bazmavep” – the official organ of The Congregation of Armenian monks-Mekhitarists in Venice, turned to D. Tchouhadjian's oeuvre only after his death. In the February 1899 issue was published the composer's obituary – the article by the editor of “Bazmavep” Simon Yeremian entitled “Armenian Verdi”. 10 years later in the March 1909 issue, appeared the article “Armenian Verdi (Dikran Tchouhadjian)” by the editor of “Bazmavep” Nerses Tiratsuan, which is the translation of Italian count Riccardo della Torre's article “Il Verdo Armeno”, published in one of Bologna newspapers on 21 February 1909.

In the XXI century on the pages of “Bazmavep” were published Anna Asatryan's two articles – “Dikran Tchouhadjian – Il Verdi Armeno” (2005) and “The Mystery of Dikran Tchouhadjian's opera ‘Indiana’” (2008).